

## ՈՒՆԵՑԱԿԱՆ ԿԱՆՅՈՒՆ

Ահեղ մորիկն անց է կացել: —  
Երովափի մօտը կանգնած  
Աղօթարարն է լուս ծագել,  
Վերապրողի հիստն օրհնած.  
Արցունքներէ շող շիթերով  
Սրբավայրի խորքում, տես,  
Կախ է թողնում լոյս շրդթայով  
Մի վառ կանթեղ հոգուն պէս:

\* \*

Ո՞վ չէ տեսել սուրբ ծաղիկներ  
Վըտակների փափրին,  
Ո՞վ չէ լըսել դրախտի երգեր  
Սոխակներից թանկագին.  
Ետդիկներին էլ իրիկուան  
Իրիկուան զէմ անիծած  
Հովից պոկուած ոտից կոխան՝  
Երգերին հետ մահացած:

Էս մի զբոյց է որ պատմեց  
Նըժդէհ գաւակն Ապուլի.  
Կրախտ է եղել, մի զբոյստ մեծ  
Հին օրերում անծալի  
Ու վիհանսի փափրի քով  
Ու պարիսպն էլ վիմարդեան,  
Ուր ապրել է շատ դարերով  
Նահապետի գերդաստան:

Երբ երկընքում պակաս էր լոյս  
Մի գիշերում առաւոր  
Ըստուներնեքին հետ տընց խոյս  
Գորովալից գրկիցն հօր՝  
Գերդաստանին սիրած զաւակ  
Գընաց սարքել մութ դաւեր  
Խորհուրդ կանչած դժոխքի բանակ  
Վախցրից անգամ սատաններ:

Նըրա ողջ սիրտն էր այրելում  
Փառքի կրակով տոյոյ,  
Շէն ու պայծառ էն դըրախտում  
Նըտեղ հօր տեղ թագաւոր.  
Նա գողացաւ օձիցը թոյն  
(Ջի գէնք շըկար տանը հօր)  
Պարիսպներին ծակեց իսկոյն  
Ու դուրս թըռաւ մենաւոր:

Արար-աշխարհ հանեց ոտքի  
Անիծեց հօրը բարի.  
Իսկ պատճառն էլ պատմեմ ձեզի  
Որ իմահաք դուք յայտնի  
Աւանդութիւնն միզ լուր բերեց  
Թէ նա մանուկ օրերում  
Ձագերին հետ զաղտնի ծըծեց  
Կաթը իծին ապառուս:

Ասև էն օր խաւարեցան  
Լոյս արեգի վառ աչեր  
Նորապըսակ հարսերն առան  
Իրենց հագին սև քօղեր.  
Դարպաս ու չէն թալանեցին  
Ասպատակներ զանազան,  
Յորդ արցունքից էլ վըտակն հին  
Դառաւ աղի ու լալկան:

Լիբանանեան մայրիների  
Հովանու տակ անցկացրած  
Դրախտի կեանքին տեղը հիմի  
Մարտ են մղում դառնացած,  
Մարտ՝ ծովին դէմ համայնակուլ,  
Ալիքներն՝ զիծուած,  
Որ խըփում են, ձեծում անդուլ  
Կողքը նաւին խարխալած:

Արտասուք են հոսում ռստղեր  
Գիշերներումը խաւար,  
Երբ յորձանքից շատ զըրուխներ  
Պըտոյա կը գան խէտհար.  
Չեն շարժուում բազուկներն էլ  
Հնազած է լոյսն աշքերում,  
Ետքն իր անյագ կլափն է բացել  
Հէք զոհերին կլանում:

Ու խաղալիկ ալիքներին  
Գէպ՝ անծանօթ հեռունի  
Կը յառաջէ երկշոտ նաւն հին  
Որոնելով լոյս աստղեր:  
Բայց լոյսը դիւ չի երևում  
Մահն է նստել դարանի.  
Մահահամբոյր էն բիբերում  
Էլ Բ՛նշ մընաց կենդանի:

Այսօր էս Ինչ անձնանքէր  
Այեգորով տեսարան.  
Կով են թափուում անվախ քաջեր  
Ջոհեր նաւի փրկութեան.  
Ջոհեր՝ աշքերն նաւին յառած  
Ալիքներն են պատառում,  
Հէներու նետն ահա խըրած  
Էն պաշտելի կրծքերում:

Էն քաջերի զոհի վերայ  
Սիրելեացը սըրտերում  
Արիւն արցունք է կը հոսայ  
Արհաւիրքի պահերում,  
Պարտքի համար, ընտանիքին  
Մահի գրկումը իջան,  
Սրտումն իջան սիրողներին  
Դառան կենտրին անվախճան:

Կով են զըցել անմեղներին  
Ալիքներին խաղալիք.  
Գրկումն էն հին խաղիւղիլ նաւին  
Մահ ու խաւար է սաստիկ.  
Խոռոված ծովին հոն ո՞վ կը տայ  
Հրաման՝ զըթայ խեղճերին,  
Ո՞վ խորտակել կարողանայ  
Քէնն ու փրփուրն ալիքին:

Ամէն հրեշտակ լաց է լինում  
Լաց և աստղերն երկընթում.  
Մէգ ու սարսուռն է համբուրում  
Կամարներին անսահման.  
Ո՞վ է խաւար այդ գիշերից  
Մինչեւ երկինք սըլանում  
Սըլանում և կոյս աստղերից  
Յածր ածում լոյս փրկութեան:

Մեր պապերի անգամ պապեր  
Թաքցըրել են հերոսին  
Էն հերոսին կուսանընէր  
Որ թրուա գիրկն աստղերին,  
Եւ աստղերից մի շող բերեց  
Մի շող էն սուրբ առաւօտ  
Էն սուրբ շողով նար վարեց  
Դրախտի ափին խընկահոտ:

Դրախտի ծոցում չըկայ արձան  
Իմ պաշտելի հերոսին  
Բայց օրտերումն թաւեթափան  
Բիւր խորաններ կանգնեցին.  
Ապուլեցի տաղասացին  
Կոյս սրտումն էլ վառ է վառ  
Սուրբ յիշատակը հերոսին  
Դրախտի ծոցումը պայծառ:

Վերապրողներ համախմբում  
Սրբավայրի լոյս ծոցում  
Խունկ և ազօթք նըւէր հանած  
Փրկութեան տօնն են երգում.  
Մինչ մահի գիրկը՝ խոռվ ծովում,  
Օրհնութիւնից հօր զրկում՝  
Կը լայ որդին այն ապառում  
Դրախտից ի սպառ տարագնաց:

Մի կոյս հոգի գեղատեսիլ  
Երկինքն ամբողջ իր սրտում  
Տննչ է ըզգում սիրով զոհուիլ  
Մեծ փրկութեան հատուցում.  
Սուրբ սեղանի ոտքին ահա  
Սէր, հուր դառած իր հոգին  
Անմահացած թռչում է նա  
Աստեղատունը Հայկին:

Էն օրիցն են դարեր անցել  
Կովափի մօտը կանգնած  
Ազօթարարանն է լոյս ծագել,  
Վերապրողի ուխտն օրհնած.  
Արցունքների շող շիթերով  
Սրբավայրի խորքում, տես,  
Կախ է ընկել լոյս շղթայով  
Մի վառ կանթեղ հոգուն պէս:

\* \* \*

Էն օրիցն էլ կայ երկընթում  
Մի այլ կանթեղ միշտ վառուող —  
Ջոհ-հոգին որ միշտ է ապրում  
Հոգիներին մէջ սիրող:

ՋԱՆԱԽԵՏԻ